

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԷՆ ԱՔՐԱՀԱՍԵԱՆ
Բանասիրության դոկտոր

ԵՂԻՇԷ. «Վասն հայոց պատերազմին»¹

Ա

Ամենապատիւ պատրիարք սրբապան հայր, գերաշնորհ եւ հոգեշնորհ հայրեր, տիկնայք եւ պարոնայք, ժառանգաորաց սաներ, հայ եկեղեցին արդէն տանավեց հարիւրամեակ մատուցում է սուրբ հաղորդության պատարագը Վարդանանց եւ Ղեոնդեանց օրը: Ս. Յակոբեանց միաբանութիւնը, Յուլեան տոնարով նշելով այս ազգային տօնը, հետեւելով աւանդութեանը իր նախնականութեան իմաստով, ասեալ յուշում է, որ պատմութիւնը, ժառանգութիւնը չեն ուրանում, եթէ այն իմաստաւոր է իր նշանակութեամբ: Հետեւաբար Ս. Յակոբեանց միաբանութեան «լուսաւոր(ական)-պահպանողականութիւնը» հայ եկեղեցու կառուցածքում առաքելական-պատմական իմաստ ունի, որը հաւակնոտ չի հնչում, այլ ժառանգակրութեան արմատին է բաղիւիւսում:

Սակայն, պատրիարք սրբապան հայր, եթէ հայ եկեղեցին այդքան հետեւողական է՝ պահպանելու աւանդոյթը, ապա հայագիտութիւնը Ղեոնդեանց եւ Վարդանանց վկայութիւնը պատմող սկզբնաղբիւրի՝ Եղիշէի «Վասն հայոց պատերազմի» երկի մասին մէկ հարիւրամեակ է՝ երբեմն յաւակնոտ, երբեմն վառածութեամբ պատուամոլ, մեր պատմութիւնը խեղաթիւրող կարծիքներ է հնչեցնում: Ուստի կարիք կայ ճշգրտումների, որ մեր աչքի համար՝ լուսաւոր, մեր ունկի համար՝ անօտար, հայրենաշունչ-առաքելական ու պարզ, մաքուր հնչի հայոց պատարագը՝ կենաց ծառի օրինաբեր խօսքի պտուղը մատուցելով քրիստոնէայ աշխարհին՝ իր ծաւալունով եւ երկնառաք խոստումով...:

Բ

Հայ դպրութեան եւ պատմագրութեան քննութեան հարցը միասնական համակարգի, նրա ճանաչողութեան, հետեւաբար եւ՝ անորոշելի միասնութեան հարց է: Դրոյթը ներառում է այսպիսով պատմականութեան հակադրութիւնների վերլուծութեան համակարգը, ուստի անբաժանելի են այս պարագայում տեքստը (բնագիրը) եւ ժամանակը: Բայց եւ՝ վերլուծութիւնը ենթադրում է տրոհում Կուտ պատմականի եւ ժամանակայինի ընկալման առումով, որ յանգում է նոյնի միասնութեան՝ արդէն տեքստից «դուրս», իմաստային եպրահանգումների կարգով, որոնք կարող են լինել յարացուցային համարժեքներ, նոյն իմաստից բխող ընդհանրութիւններ:

Ասածս առ հասարակ կիրառելի է ինչպէս պատմական բնագրերի (այսինքն՝ ներիսկ, աւարտուն ստորագելութեամբ բնորոշող), այնպէս էլ տեքստերի համադրական եւ Կուգադրական, համեմատական լուծմունքների պարագայում: Ուստի մեթոդը, որ լեզուական եւ առարկայական աշխարհի միասնութեան է ձգտում, համընդհանուր նշանակութիւն ունի եւ՝ գրական, եւ՝ պատմական տեքստերի լուծմունքի պարագայում:

Հայ մատենագրության առանցքում, հետևաբար, չկան խնդիրների տրոհումներ, այլ կան Միասնության հակադիր «մասեր», որոնց լուծումները յանգում է նոյն(ի) խնաստի բաժանելիությանը սույն: Սա նշանակում է, որ Եղիշեի երկի բնութիւնը տուեալ դէպքում աւանդների միասնության հարց է ինչպէս ժանրային-կառուցումաձևային, այնպէս էլ պատմական-ժամանակային, աշխարհաեացքային առումով: Ուստի, հաշուի առնելով ընդհանուրը, փորձենք մասնատրել մի քանի հարց, որոնք մատենագիտական տարբեր, եթէ չասենք՝ հակադիր, տեսակետների եւ եկրագանգումների առիթ են տուել:

Այսպէս. Կոտ պատմության ընդգրկման առումով՝ սկսած Կորիւնից-Ագաթանգեղոսից մինչեւ Փարպեցի չկայ ընդհատում: Հայ պատմիչները շարունակել են այնտեղից, որտեղից աւարտել է իր նախորդը: Ժամանակագրական ընթերցման խնաստով սա կարեւոր փաստարկ է, որ նշանակում է, թէ Եղիշեի «Վասն հայոց պատերազմի» երկի բնագիրը ներառում է V դարի պատմագրության համակարգում, ուր ինքնուրույն խնաստ կրելուց բացի (բնագրային առումով), նաեւ համադրական-համեմատական նշանակություն ունի նախ այս ելքով, այնուհետեւ նոր՝ օտար աղբիւրների հետ համեմատության համակարգում: Եւ Եղիշեն էլ շարունակող է: Նրա պատմությունը ընդգրկում է Արշակունեաց գահի բարձումից յետոյ (428 թ.) ընկած շրջանը, մինչեւ 460-ական թուականները: Ուստի, կարելի է ասել՝ Եղիշեն Կորիւնից, Ագաթանգեղոսից եւ Բիւզանդից յետոյ «միջին» պատմիչ է, որի խնդիրը, Օջականի լեզուով ասած, «իրաւ վկայութիւն» է մի դարաշրջանի, երբ Հայաստանը քրիստոնէական-լուսաւորական մեծ առաքելություն էր իրականացնում՝ պահպանելով ոչ միայն իր ինքնութիւնը, այլ պատնէշում էր քրիստոնէական աշխարհի սահմանը արեւելքում՝ կենաց եւ մահու պայքար մղելով Զրադաշտության, Պարսկաստանի ներխուժման դէմ դէպի արեւմուտք...: Սրանից ելնելով՝ Մ. Աբեղեանը V դարի հայ դպրութիւնը առ հասարակ անուանում էր «Եկեղեցական-մաքառման գրականութիւն»: Բայց եթէ երեւոյթը իր նախահիմքերով սահմանենք, ապա ճիշտ կը լինի այն մեկնաբանել «քրիստոնէական-լուսաւորական» ելքով, որը հանդիպատրուեց, ատելի ճիշտ՝ Կոգահեռուեց ազգային-ազատագրական շարժմանը V դարի կէսերից սկսած:

Քրիստոնէական լուսաւորական շարժումը Հայաստանում թէեւ ատելի վաղ շրջանի, IV դարի ծնունդ է, բայց առանց այդ հիմքի եւ նրա ճանաչողության, դժուար թէ ճիշտ մեկնաբանուի Վարդանանց եւ Ղեւոնդեանց վկայութիւնը, որ Եղիշեի պատմության բնագրի առանցքն է: Ուստի, ենթատեքստում կերպարոյթելով (կամ նշմարելով) ընդդիմախօսին, նշենք այդ շարժման առարկայական ընթացքը, որ մեզ կը մղի այլ եկրակացության, ինչից խուսափում է մինչ այսօր հայագիտութիւնը:

Իբրեւ դրոյթ առաջնայինը հետեւեալն է. վերոնշեալ լուսաւորական շարժման համակարգը միասնական է այնքանով, որ նրանում անբաժանելի են քրիստոնէութիւնն իբրեւ պետական կրօն ճանաչումը Հայաստանում 301 թուին, առաջին երկիրը համաշխարհային քաղաքակրթության պատմության մէջ, գրերի գիւտը (404/406 թթ.), Մաշտոցի, Ս. Պարթեւի վիթխարի ջանքը՝ քրիստոնէութիւնը ազգայնացնելու՝ շուրջ մէկդարեայ աւանդների խրաջման, ազգային պատմության եւ դպրության, լեզուի միջոցով: Ի հարկէ, տուեալ պարագայում նշանակություն ունի իր նախահիմքերով քրիստոնէական շարժման մաս ճանաչումը իր առաքելական բնոյթով, այնուհետեւ դրա տրոհումը ամբողջից՝ Նիկիոյ (325 թ.), Կ. Պոլսոյ (381 թ.) եւ Եփեսոսի (431 թ.) տիեզերական ժողովների կանոններով: Աւելին, Գրիգոր Լուսաւորչի

հիմնադրած եւ Ներսէս Մեծի զօրացրած եկեղեցին, արդէն IV դարում, պետական կառուցումը ունենալով իր փոխադրի դերը, նոյնը եւ ազգային-քաղաքական կեանքում, կապակերպում ուժ էր, որն արտայայտուեց հայ պետական կեանքում թերեւս դեռ չգնահատուած մի կարեւոր փաստաթղթով՝ հայ եկեղեցու «Կանոնադրութեամբ», որ հաստատուեց Ս. Պարթեւը 426 թուին: Սա առաջին «օրինագիրքն է» նաեւ մեր պետական կեանքում, ուստի երկրի քաղաքական տրոհումը: 387 թուին եւ 428-ին՝ Արշակունեաց գահի բարձումը չանդրադարձաւ եւ չէր կարող կապնալուծել եկեղեցին, ատելին՝ գրեթէ գիտի միջոցով քրիստոնէական-լուսաւորական շարժման ընթացքը, համախմբելով ժողովուրդին, վերաճեց քաղաքական արժէքի, որի զագագթնակէտը արդէն Աւարայրի բախումն է 451-ին: Դրա նկարագրութիւնը տալիս է Եղիշէն, իսկ Փարպեցին իր երկում՝ տոհմական Պատմութեան եւ ազգային-ազատագրական շարժման հետագայ ընթացքն է պատկերում «Հայոց Պատմութեան» երրորդ դրուագով՝ նկարագրելով Վարդանի ժառանգակցի՝ Վահան Մամիկոնեանի եւ հայ նախարարների հետագայ պայքարը 481-484 թուականներին: Այնպէս որ՝ սա երկարատեւ պատմական միասնութեան ընդգրկում է, որի աշխարհաեացքային առեղծը լուծման նորագոյն մանրամասներ է կրում: Դա է պատճառը նաեւ, որ Եղիշէն իր երկը սկսում է ատելի վաղ շրջանի իրադարձութիւնների արձանագրումով՝ հեռապատկերում ունենալով Աւարայրի մեկնութեան հարցը, որը պատմականօրէն պատճառաբանում է հենց Եղիշէի կողմից եւ իր պատմութեան գլխաւոր առանցքն է՝ հեղինակի անուանումով՝ ժամանակը (սղսպէս է կոչւում յոթ եղանակներից առաջինը), մեր հասկացութեամբ՝ դարաշրջանը եւ դարի մտայնութիւնը:

Ս. Արեղեանի վերլուծութեամբ Եղիշէն հմուտ պատմիչ է, ատելի շրջահաւեաց, քան Փարպեցին² եւ ատելի սուուգաբան, մի խօսքով՝ դէպքերի ականատես կամ մասնակից, որը գրում է դէպքերի թարմ հետքերով, հոգու եւ մարմնի զգայարաններով շօշափելով...: Եղիշէի քննական բնագրի վերլուծաբան Եր. Տէր-Մինասեանը Եղիշէի տեքստը երկրորդելով՝ նկարագրում է այն պատմական միջավայրը, որ Արեղեանի լուծումնքում մեկնաբանում է եռամիասնական յարացոյցով՝ սկիզբը, միջոցը, աւարտը:

Սկիզբը՝ այսինքն եղելութեան պատճառները հետեւեալներ են.

ա) Մասանեան Բրանում մապդեականութիւնը Արտաշիրից սկսած պետական կրօն էր, եւ մոգերը ունէին քաղաքական մեծ ազդեցութիւն,³

բ) նրանք փորձում էին գերիշխանութեան տակ եղող ժողովուրդներին հաւատափոխ անել՝ ամրապնդելով երկրի սահմանները,

գ) դրա հետեւանքով են տեղի ունեցել քրիստոնէական հալածանքները Շապուհ Բ-ի օրոք (310-379 թթ.)՝ հայոց Արշակի անկումից յետոյ (Բիւզանդ Դ, 56, 59), այնուհետեւ՝ Պարսկաստանի յաղթական շրջանում Բիւզանդիայի հանդէպ՝ Յակեթոս II (438-457) օրոք,

դ) Նեղոյէքէն Յակեթոս II թագաւորի մասին գրում է, թէ սա հալածում էր քրիստոնէաներին, ամուսնացել էր իր աղջկայ հետ, բայց յետոյ սպանել նրան⁴: Այս բնութագիրը միանգամայն համապատասխանում է Եղիշէի նկարագրած արեաց արքայի տիպարին: Թէեւ ատելացներ, որ Զրադաշտական կրօնը առաքինութիւն էր համարում իր աղջկայ հետ ամուսնութիւնը, - եւ ենթատեքստում հասկանալի կը լինի Եղիշէի կերպարորած վկաների (Ղեռնդեանց) եւ Յակեթոսի թղթի

պատասխանի լուսաորական արժեքը, որ միայն աշխարհայեցության հարց չէ, այլ մշակութային-բարոյական: Եթե սրան էլ յառելնք Յապկերտ II-ի «անխաղաղասեր», «չար», «անհաստատ» բնաորության եղիշէի նկարագրությունները եւ հապարապետ Միհրնէրսէի դերը («հին վիշապն չարաթոյն»), որի կարծիքի հետ հաշուի էին նստում «մեծամեծք ու փոքունք» եւ «թագաւորն հրամանի բերանոյ նորա անսայր», մոգերի խորհուրդը Յապկերտին՝ քրիստոնէաներին հաւատարմութիւն անելու (թէեւ ինքը՝ Յապկերտը, երկրի մեծամեծերը «էին ի նմին բանի» (համակարծիք էին), ապա եւ՝ Արեւելեան Հռոմէական Թեոդոս կայսեր (408-450) թոյլ, յարմարողական վարքը, որ «երբեք քաղաքականապէս հասուն չդարձաւ»⁵, ապա թերեւս հասկանալի կը լինի նախապատերապմեան վիճակը:

Շուրջ տասնամեայ մի շրջան, պարսիկները, նախապատրաստելով գլխաւոր հարուածը քրիստոնէական աշխարհին, գործի որին պետական-քաղաքական մեքենան: Մեկուսացնելով Բիւզանդիային, արտաքին քաղաքական նպատաւոր դիրք ունենալով, որի մասին վկայում է Դ. Դեմիրճեանը իր «Վարդանանց Պատերապմը»⁶ հետապօստութեան մէջ, ջլատելով նախարարների միասնութիւնը ինչպէս պարսկական մասում, այնպէս էլ պրկելով արտաքին գործակցութիւնից բիւզանդական հաւտածի հայ նախարարների հետ, Յապկերտ II-ը մոգերի եւ Միհրնէրսէի աջակցութեամբ նախապատրաստում էր հարուածը գլխաւորապէս Հայաստանի դէմ (թէեւ հրովարտակը ուղղուած էր նաեւ Վիրաց, Աղուանից, Լփնաց եւ Ծաղիկից աշխարհներին)–(Երուանդ Տէր–Մինասեանը «Ծաղիկից» աշխարհը նոյնացնում է Սոտերի (Ծողիկի) տեղանունն հետ եւ հաւանական է համարում նրանց՝ «Ծաղիկից» եւ «Լփնաց» կովկասեան լեռնական լինելը, էջ 451, ծան. 20, 21, 22): Եղիշէն սա մոքում ունենալով, ասում է. «Թէպէտ եւ բոլոր ազգերի վերաբերմամբ էր այս անկարգութիւնը, բայց աւելի Հայոց աշխարհի դէմ էր մարտնչում, որովհետեւ նրանց աւելի ջերմեռանդ էին տեսնում աստուածապաշտութեան մէջ...»⁷ (ընդգծումը իմն է՝ Ս. Ա.): Ուրեմն, Հայաստանն էր այն գլխաւոր պատուարը, քրիստոնէական աշխարհի այն գլխաւոր ուժը, որը կապմակերպեց դիմադրութեան շարժումը՝ դրանով իր վրայ կրելով հարուածը, սակայն հաւատարիմ մնալով իր առաքելութեանը՝ քրիստոնէական–լուսաորական նախահիմքերը պահպանելու, քրիստոնէական–լուսաորական քաղաքակրթութեան սահմաններն իրենով ընդարձակելու, եթէ կ'ուզէք՝ նրա առաջատար ուժը եւ ոգին վերածնելու՝ մեր ինքնութեան փաստումով, համաշխարհային քաղաքակրթութեան մէջ մեր (Հայաստանի) վիթխարի դերը ունենալու եւ ճանաչելու առումով: Ահա մեր կարծիքով բուն էլակետը, որ հաշուի չեն առել թերեւս հայագիտութեամբ պարապող այն մատենագէտները, որոնք փորձում են՝ սկսած XIX դարավերջից մինչեւ այսօր, ժխտական կեցուածքով ապացուցել անապացուցելին: Եւ թէեւ նրանց մեկնությունները հենց հակասական են իրենց դրոյթներով եւ միտում են V դարի հեղինակներին տեղաշարժելու, տանելու աւելի ետ՝ 6-7-8-րդ դարեր, որից չի խուսափել նաեւ Եղիշէն (օրինակ՝ Ն. Աղոնցը, Գր. Տէր–Պողոսեանը, Գր. Խալաթեանցը, Բ. ծ. վրդ. Կիւլեւերեանը՝ աւելի վաղ շրջանում, Ժան Պիեռ Մահէն, Ռ. Թոմսոնը, Պիտեր Բաուին՝ XX դարի 80-90-ականներին)⁸: Բայց աւանդական հայագիտությունը մեծ փորձ ունի ինչպէս հերքելու դրանք, այնպէս էլ լուրջ հետապօստություններով կանխելու արտաքուստ լուրջ թուացող բնադատների վարկածները, դիմագրաւելու թոմսոնեան տիպի միջակ եւ

«քամի հողովողների» (նրանց կնքահայրը Ռ. Մինին է այսօր ԱՄՆ-ում) դիցաբանական-միֆական պատկերացումները հայ ժողովրդի պատմության եւ պատմական դերի մասին: Առ հասարակ, արքիումատիկ ճշմարտություն է, որ Եղիշէն լուրջ պատմիչ է, գլխաւորապէս ականատես-պատմիչ է, սուուգապատում են Հայոց աշխարհի վերաբերեալ նրա պնդումները: Աւարայրի նախօրեակին Յապկերտը ճնշումներով, հարկերով փորձում էր նեղել, ջլատել հայերի ներքին միասնութիւնը: Պարսիկ Դէշապուհը գալով Հայաստան՝ աշխարհագիր է անում, աւելացում են հարկերը եւ տուրքերը: Մինչ այդ՝ եկեղեցին, միայնակեացները ապառ էին տուրքերից, նրանց փրկել են դրում հարկեր: Մի մոգպետի է նշանակում Յապկերտը՝ մեր աշխարհի դատերը վարելու՝ պրկելով այդ իրաւունքից եկեղեցուն: Սա ճշգրիտ քաղաքականութիւն էր պարսիկների կողմից՝ երկիրը ջլատելու ներքից, պրկելու եկեղեցուն՝ միակ քաղաքական միաւորող ուժը, որ կարող էր դիմադրել կամ կոչել դիմադրութեան...: Երկրորդ՝ քուշանների դէմ եւ ճորա պահակը փակելու համար Հայոց աշխարհից հեռացուել էր այրուծին, աւելի էր ծանրացուել նրա հարկերը: Թէեւ պարսիկները պարսնալով պարսնում էին, թէ «ինչպէս է շէն մնում այդ աշխարհը», Եղիշէի պատճառաբանութեամբ ասում է. «Եւ այս ամէնն անում էր (Յապկերտը), որպէս քի գուցէ քանդի միաբանութիւնը, եւ եկեղեցու ուխտը ցրուէ, եւ միայնակեացները փախցնէ, եւ շինականներին տկարացնէ. եւ չափապանց աղքատութեան պատճառով ականաջ ընդունեն մոգական կրօնը» (էջ 47):

Ահա այս հողի վրայ է կայանում միասնութիւնը, ահա ինչ էին կորցնում հայերը՝ մոգական կրօնը ընդունելու պարագայում: Եւ այս օրհասական պահին է Միհրներսէի գրում հրովարտակը հայոց մեծամեծերին, որպէս քի ընդունեն մոգութիւնը: Եւ պատասխան-մերժումից յետոյ հայոց նախարարներին կանչելով Տիպրոն, ստիպում հոխորտանքով ...: Բայց հայերը Վարդանի գլխաւորութեամբ առերես համաձայնելով հաւատափոխ լինելու, գալով երկիր, ապառամքում են եւ կանոնադր, արագ հարուածի տակտիկայով, ռազմավարական առումով պատճառաբանուած, ջլատում պարսիկներին Աւարայրում, Տղմուտ գետի ափին եւ, ետքաշուելով երկրի խորքը, ստիպում դիմադրելով, որ պարսիկները ետ առնեն իրենց պահանջները:

Շատ է թանաք հոսել Աւարայրի ճակատամարտի յաղթութեան, թէ պարտութեան մասին...: Եղիշէն (ինչպէս Խորենացին Հայկի եւ Բէլի մարտի մասին կը գրէր նոյն ոճով) գրում է. «Որովհետեւ ո՛չ թէ մէկ կողմը յաղթեց, եւ միւս կողմը պարտուեց, այլ քաջերը քաջերի դէմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտութիւն կրեցին» (էջ 241): Մ. Արեղեանն աներկբայ ասում է, թէ դա հայերի յաղթանակն էր, որ պատճառաբանուած է պատերազմի հետեւանքներով, այն է՝ քրիստոնէական ապառ պաշտամունք, հարկերի վերացում, այրուծի արքունի պարտիքի թեթեւացում, բռնագրաւում եւ եկեղեցական եւ աշխարհիկ սեփականութեան ետառացում, այլ խօսքով՝ «վերացում էր ամէն ինչ, որ պատճառ էր եղել հայերի ապառամքութեան»: Ուստի եւ՝ «վերջնական յաղթանակը հայերն էին տարել, քանի որ ե՛ւ եկեղեցին, ե՛ւ հայ ավետականութիւնը վերադառնում էին իրենց տնտեսական եւ այլ իրաւունքները»¹⁰:

Եւ նրանք, ովքեր յաւակնոտ են՝ չգնահատելով, բնական է, թերանում են կամ, ինչպէս Եղիշէն է ասում՝ «Բնութիւնից իրենց վեր են դասում» (Յապկերտի մասին է այդպէս ասում), չշաղկապելով սկիպրը վախճանին, ուրանալով մեր ժողովրդի առաքելութիւնը, նուաստանալով կամ՝ ի ծնէ լինելով նուաստ,

9.

A.R.A.R.@

«սի բապուն այն են պոր ոչ գիտեմ, քան թե գիտիցեմ: Զի հինգհարիսով չափ յակամե՛ յանուանե՛ ճանաչեմ. ոչ միայն որ առագագոյնքն էին, այլ պրապունս ի կրոսերագունաց անոխ» (Էջ 403): Նշանակում է, կարող ենք եպրակացնել, որ Եղիշէի «Վասն Հայոց պատերապմի» երկը պատմելու եւ ձեռի խրաչառու կերպով, որ կրում է դարաշրջանի գրաբանութեան առանձնայատկութիւնները: Իր մեկեմասին՝ Դաւիթ Մամիկոնեան երեցի յանձնարարութիւնը յանձնառնելիս Եղիշէն նշում է իր պատմութեան բնոյթը՝ ճառագրութիւն: Այսպիսով, Եղիշէն յանձնառնելով գրել, «որպէսպի շարունակելով կարդա(ս), «լսելով պառաքինացն պրաջութիւն, եւ պիտու կացելոցն վկայութեան» (Էջ 8), որ «յուսացողներին յոյս, քաջերին քաջաւերութիւն, որոնք յօժարակամ յարձակում են մահուան վրայ» (Էջ 11) եւ ականատեսի վկայութեամբ,՝ ապա յառակ է դառնում, որ Եղիշէն, ինչպէս Ագաթանգեղոսը եւ Բիւսանդը, առաւել եւս՝ Մեծն Խորենացին, պատմութեան նոյն շրջան մեկնաբանում են խորքի եւ ձեռի նոյն առանձնայատկութեամբ: Այն է՝ հինգերորդ դարի մտայնութեանը փոփոխութիւնը՝ ոճական եւ ժանրային առումով, պատմութիւնը, գրականութիւնը, մեկնութիւնը, խնամատարութիւնը մի համակարգում է ընդգրկում: Ուստի խորքի եւ ձեռի միասնութեամբ էին արտայայտում իրականութիւնը, որ նոյնն է, ասեմք՝ առարկայականի եւ գեղարուեստականի, էպիկականի եւ քնարականի շարայարութեամբ: Միայն յաւելեմք, որ այս ձեռաբանութիւնը սահմանելով ընդհանուրը, իւրաքանչիւր պատումի մէջ տարբերակում է տուեալ պատմիչի ընդգրկած շրջանով, պատմող-մեկնիչի աշխարհաեացքով, ժամանակաշրջանով: Եղիշէն հետեւաբար տարբեր է այնքանով, որ պատմութիւնը անմիջական արձանագրողն է նաեւ: Եւ իր տաղանդի համեմատ՝ ոչ միայն ճառագրում է, այլեւ մեկնում, գնահատականներ տալիս, քարոզում, հռետորական ճիգեր գործադրում, խաղաղում, յափշտակում: Հետեւաբար այս երկը «ճառագրութիւն» չէ (ինչպէս միօրինակ Աբեղեանն է կարծում), ոչ էլ «դիւցալներգութիւն» (ինչպէս Եղիշէ Դուրեանն է փաստում), առաւել եւս՝ «վկայաբանութեան պատմական դրուագ», ինչը «վրիպած պատմութեան» յատկանիշներով է բացառորում Թորգոմ արք. Գուշակեանը, այլ նախ եւ առաջ պատմութիւն՝ համադրական իր ստորոգելիներով, այնուհետեւ նոր՝ ճարտասանութիւն, ինչը բնորոշ էր դարի մտայնութեանը՝ լուսաւորական-մեկնաբանական իր տարաշէրտերով ու շարայարութեամբ:

Կառուցուածքի (ձեռի) եւ խորքի (պատմութեան) այս ներքին շարայարութիւնը երկի ենթատեքստում, փոխաբերական իր շերտերով, մոտանում է ճիշտ եպրակացութիւնների յանգելու, որը պակասում է քննադատներին՝ ճիշտ ըմբռնելու (եթէ կամենում են) Եղիշէին: Եղիշէի քննադատները այսպիսով ջանք չեն ինչպէ՛ վերհանելու հակասութիւններ, որոնք պատճառ են ինչպէս աւելի ուշ շրջանի հեղինակ հռչակելու այս պատմիչին, այնպէս էլ վեղձարար, որը կեղծում է իր անձը՝ Փարպեցու երկրորդ դրուագը վերաշարադրելով (Ռ. Թոմսոն, Պիտեր Բաուի), ինչպէս Խորենացին ըստ Ակինեանի, Խալաթեանցի եւ Կարիւլիի՝ մինչեւ Թոմսոնով ու Թոմսոն եւ նրանց կարծիքով կեղծել է հայոց պատմութիւնը...:

Նոյն վարկածը «խաղաղկուեց» եւ Եղիշէի աղբնչութեամբ: Սկզբնապէս գտնում էին, որ Եղիշէն «Միանձանց ճառի» մէջ ապրուել է Փիլոնի թարգմանութիւնից: Եւ քանի որ այդ թարգմանութիւնը համարում էին VI դարում արուած, ապա Եղիշէին էլ տարան VI դար (Գր. Տէր-Պօղոսեան, Գ. Խալաթեանց) ...: Բայց Տիմոթեոս Կուսի «Յակաճառութեան» երեսան գալով (ամենաուշը մինչեւ 480-ական թուականների սկիպրը ըստ Աբեղեանի), Փիլոնի

և այլ յունաբան թարգմանություններ մնում են հինգերորդ դարում (480-ականներից առաջ) և չի փաստում VI դարի վարկածը: Այնուհետև գրուեց Ն. Աղոնցի «փորձագրությունը»՝ որը քաղում էր Եղիշեի բնագրից, ուր առում էր, թե՛ իբրև յունաց մասում «սպարապետ» Վասակ Մամիկոնեանը, որին «առույթեամբ» թուղթ էր գրել Վասակ Մինին՝ խախտելու Վարդանի ուխտը այդ հատուածի հայ նախարարների հետ¹⁵, ոչ թե յունական մասի «սատրապներից» մէկն է՝ ինչպես կարծում է այս հայագետը, որ եղել է Յուստինիանոսի ժամանակ, 529 թուից յետոյ, երբ կայսրը նշանակեց ստրատեգ և երեք դուքսեր, այլ, ըստ Հ. Գեյցերի, «սպարապետ կոմս կամ դուքս տիտղոսը կրող Հայաատանի վարիչները Յուստինիանոսի կայսրութեան ժամանակ ստրատելատի (սպարապետի) աստիճանին էին բարձրացում¹⁶»: Եւ միայն... ուստի ստույգեամբ ծածկուեց նաեւ այս վարկածը...:

XX դարում, սակայն, քննադատների մոայնութեան ուղղութիւնը ոչ թե բանասիրական ճշգրտումներն են, այլ արդէն Եղիշեի երկի ժանրի և կառուցումների, ձեւի և խորքի անկատարութեան և այլնի մասին է: 1982 թուին Ռ. Թոմսոնի թարգմանութեամբ և Առաջաբանով անգլերէն հրապարակուեց Եղիշեի երկը: Այս հայագետ յորջորջում անձը նորից վերապարծեցրեց արդէն հերքումը: Եղիշէն ոչ աւել, ոչ պակաս պեղծարար է ըստ նրա, որը ստեղծագործել է VI դարում և «թաքցնում է, թե ինչքան է օգտուել Մակարայեցիների պատմութիւնից¹⁷»: Իսկ նրա արբանեակը՝ Պիտեր Բաուին, եպրակացնում է՝ Եղիշէն... «քիչ տեղեկութիւններ ունի տալու հայոց քաղաքական կամ ռաբանական պատմութեան հետապօտողներին¹⁸»:

Ինչ խօսք, եթէ նախորդների տրամաբանութեամբ՝ Եղիշեի երկը «դիցապներգութիւն» է միայն կամ «վկայաբանութիւն», ապա Պիտեր Բաուին էլ կարող է յայտարարել, թե «Վասակ Հայոց պատերապին» և V դարի հայ պատմագրութիւնը սոսկ «մերձպատմական շարադրանքներ» են¹⁹ (parahistorical text):

Պատմութեան աղբաւացումը, Եղիշեի երկի ժանրի ներտրոհումը՝ բաժանելով պատմութիւնը աշխարհաեացքից, դարաշրջանի կրումներից, որին հետեւել է Եղիշէն, նոյնն է, ինչ անդամահատումը առանց բժշկական գործիքների...: Թորգոմ արք. Գուշակեանը, թէեւ այս առումով հետեւող է, բայց ամբողջական է՝ անդրադառնալու համար:

Հակիրճ լինելու համար բերենք մի քանի փաստարկներ: Եղիշէն ըստ վերոնշեալ քննադատի՝ «ակատեմիական գրող մըն է», որը իր «ոճով... շատ-շատ սերունդ մը կրնայ խաբել», «չունի մոսածման ջերմութիւն²⁰» և «վերացական գրագէտ մըն է²¹», «տարտամ», «վրիպած է պատմական ըմբռնողութեան մէջ», չունի պատմողի «լրջութիւնը, դիտողութիւնը, թափանցումը... իրական մնալու անփոխարինելի առաքինութիւնը²²», իսկ ամէնից կարեւորը՝ «իւր տեսնելու ձեւը ուղղակի, անմիջական, անձնական ձեւը չէ²³»: Ուստի Եղիշէն տկար է «իւր հերոսներով, պատմական պայարանքով, ներկայացուցչական ընդունակութիւններով²⁴»...:

Քննադատի բառապաշարն այնուամենայնիւ յագեցած է կուլտուր-պատմական դպրոցի արտայայտչաձեւերով, որում առկայ է Յ. Օշականի ոճը: Բայց Օշականի բառապաշարում մի էպր էլ կայ, որ հեղինակը գրում էր յառուկ դէպքերում, երեսի պայրանալիս, ասելով՝ «բաջադանք» է, ուրիշ դէպքում՝ «բառակոյտ» է²⁵...:

Մեր հեղինակը կարծում է սակայն, որ Եղիշէն «վկայագի» է... բայց բանասիրության է խաղում կուլտուր-պատմական օրինաչափություններով: Թէեւ այդ դէպքում անգամ, չժխտելով Եղիշէի անձը, պետք է եպրակացնել, թէ Եղիշէն իր զգայարաններով, անձնի-պատմողի ներկայությունն է պարտադրում՝ երկը սխեմով պատմական ժամանակի բնութագրությամբ, եւ աչքի առաջ ունենալով Աւարայրը, վկայաբանական, քրիստոնէական-լուսաւորական իր աշխարհաւացքով նկարագրում է իր հերոսների վարքը, պատմական առաքելությունը, որը վերածում է ազգային գիտակցության: Հետեւաբար, Եղիշէն նպատակաւորաձ, դիմանկարի վարպետ է...: Եւ դիմանկարի վարպետ լինելով, մասնաւորաբար, «ձեղքում է» լուսանցքը եւ պատմական դիմագիծ ունեցող կերպարների խօսքի ետեւում լինելով ինքը, «անցնում» Ղեւոնդեանց նահապետների ճանապարհով, որ ոչ թէ Տիպրոն քշուող «շղթայակապ հաւերի խումբ» է, այլ Հեթանոսաց առաքելի (Պողոսի) վարքի իրապատում շարունակություն ու՝ արդէն գրում ոչ միայն հայերիս համար, այլ քրիստոնէական-լուսաւորական շարժման գաղափարախօսությամբ:

Ուրեմն՝ Եղիշէի գրաբանությունը ենթակայ է ձեւաբանական պատումի մի առանցքի, ուր անձը-պատմողը կրելով իր դարի մտայնությունը, պատմագրում է նախ եւ առաջ եւ դրա միջոցով վկայում՝ իբրեւ ճարտասան եւ գեղագէտ, փաստելով թէ՛ Յապկերտի, թէ՛ Վարդանի եւ Ղեւոնդեանց՝ Մաշտոցի եւ Պարթեւի գործի շարունակող լուսաւոր այս մեծերին՝ Յովսէփին, Ղեւոնդին, Սահակին եւ նրանց կրտսեր աշակերտներին (որի մէջ շարունակականութեան գաղափարը կայ՝ Սամուէլին, Մուշէին, Արշէնին, Աբրահամին, գրքի սկզբում՝ նահապետ Գարեգինին, որն ընդդիմացաւ Յապկերտին եւ նահապետակեց...: Աշխարհականներին եւ փնտրողագրեալներին Եղիշէն եւս թուարկում է, ներառեալ եւ Աւարայրի նահապետներին...:

Պատումի առանցքում թերեւս Եղիշէն եւ իր կերպարները «աւարտուն» կերպարներ են՝ որոշակի աշխարհաւացքով, այս դէպքում եւ՝ Յապկերտը, եւ՝ Միհրնէրսէի, պարսից կրօնի եւ պետութեան շահերի կրողներն են, եւ նրանց խօսքն ամբողջական է Միհրնէրսէի Թղթում: Ամբողջական են Վարդանը եւ վարդանանք, որոնք պահպանում են պետութեան, ազգային ինքնութեան շահերը եւ քրիստոնէական-լուսաւորական գաղափարի կրողներն են: Ղեւոնդեանք այս շարքում «ոչ թէ աստուածաբանություն են ծախում», այլ մարգարէանում են իրենց տառապանքներով, նոյնով օժտում անգամ պարսիկ գլխաւոր մոգին, որ տեսնելով եւ լսելով Ռշտունեաց Սահակին, Յովսէփին եւ Ղեւոնդին, ինչպէս Հեթանոսաց առաքելի՝ Պողոսի պարագայում, նրան էլ յայտնուելով տեսիլքը, դրանով զօրանալով, ճշմարիտ հաւատի է գալիս: Եղիշէն Վարդանանց եւ Ղեւոնդեանց կերպարներով է «տարրալուծում» (ուղղակի եւ փոխաբերական մեկնաբանական դրոյթներով) իր ասոյթների գաղափարը՝ հայրենասիրությունը, հաւատը եւ յանուն այս երկուսի՝ անհատի փոխաբերութեան գաղափարը: Ըստ էութեան Վարդանը եւ Ղեւոնդեանք հայրենիքի եւ հաւատի նահապետներ են, որոնք մարգարէանում են՝ աւանդները պաշտպանելու գաղափարով, իրենց օջախը, իրաւունքը, թերեւս կիսաանկախ պետութեան գաղափարը պաշտպանելով, որ վերածննդի եւ անկախութեան նախադրոշն է V դարի կէտերի հայ մտայնութեան մէջ (այս նոյն մտայնութեանն է հետեւում եւ Փարպեցին): Եւ եթէ Խորենացու Տիգրանը «արանց կացեալ գլուխ» եւ մենք՝ հայերս, «ուրբեր լծի տակ էինք», նա (Տիգրանը) «կարգեց վերադաս», լուծ դնող... ապա Վարդանը եւ Ղեւոնդեանք պաշտպանեցին այն հաւատը եւ աշխարհը, որի դաւանած քաղաքակրթությունը

մեր գոյութեան խարխախն էր, որը վերաճեց համաշխարհային քաղաքակրթութեան (եւրոպական իմաստով) եւ ընկած է դրա նախահիմքում...:

Եղիշէի երկում վարքագրութիւնը, ի հարկէ, սրանով ամբողջական չէր լինի, եթէ Եղիշէն Աշտիշատի ժողովի պատասխան-թղթում մերկայարանոց քրիստոնէական բարոյականութիւն «ծախէր»...: Մեր կարծիքով այդ պատասխան-թուղթը իր արժէքով ոչ միայն դարի մտայնութեան այտայտոյթիւնն է, այլ իւրօրինակ «Եղծ աղանդոց», որի արժէքը մեզ համար չէ միայն մեծ, այլ քաղաքակրթութեան բուն նախահիմքում մի «սերմնահատիկ» է, որի ծաւալումը (մեռնելով բազմացումը) հետագայ դարերում եւս տեսանելի է: Իբրեւ օրինակ՝ ասեմ. վիթխարի պարսկական մշակոյթը կործանուեց VII դարի արաբական արշաւանքներով, բիւզանդական պատմագրութիւնը (VI դարից սկսած) վերաճեց քրոնիկագրութեան, բայց հայ պատմագրութիւնը շարունակեց իր աւանդները նաեւ միջին եւ ուշ միջնադարում: Հետեւապէս՝ կրօնական-լուսաւորական, փիլիսոփայական-քառագոյնական «անկէպ մորենու» արժէք ունեցող Եղիշէի փաստագրութիւնը թերեւս առանձին ուսումնասիրութեան նիւթ է նաեւ...:

Ահա թէ ինչու այս Թղթի ենթատեքստում հասկանալի է դառնում եւ վարդանի ճառի բնոյթը, որի համար Հաւատը եւ Հայրենիքը նոյն սկիզբն ու գինն ունեն, Ղեռնդեանց առաքելապատումը եւ հայ փափկասուն տիկնանց արժանահաւատ տառապանքները, որի արուեստը Եղիշէի գլխով մոլորեցրել է անգամ թերահաւատներին, Եղիշէի քննադատներին, որ նոյն լոյսից բխող աւետարանական խօսք է, ուստի մէջբերենք. «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք եւ գգուեալք էին խրաբանչիւր բաստեռունս եւ ի գահաւորակս, համապապ բոկ եւ հեռի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթս ինդեալ ուխտիւք, քի համբերել կարացեն մեծի նեղութեանն: Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ողորովք քարակաց եւ ամճովք Լրեոց, խոտաբուտ կենօք իբրեւ պկայրենիս ընդունէին պկերակորն մեծաւ ինդրութեամբ, եւ ոչ յիշէին ամենեւին քսովորական փափկութիւնն: Սեւացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա, վասն քի ցերեկ արեակէկք եւ քամենայն գիշերսն գետնաբեկք:

Սաղմոսք էին մշտենջենաորք մրմունջք ի բերանս նոցա, եւ մխիթարութիւնք կատարեալք ընթերցումք մարգարեիցն: Միաբանեցին երկու երկու իբրեւ ամոյք հաւանք եւ հաւասարք՝ ուղիղ տանելով պկօսն արքայութեան, քի առանց վրիպելոյ հացեն ի նաւահանգիստն խաղաղութեան:

Մոռացան վկանացի տկարութիւն, եւ եղեն արուք առաքինիք ի հոգեւոր պատերապմին. մարտ եղեալ կռուեցան ընդ մեղսն կարեւորս, հատին կորեցին եւ ընկեցին քմահաբեր արմատս նորա: Միանոթեամբ յաղթեցին խորամանկութեան, եւ սուրք սիրով լուացին վկապտակ ներկուածս նախանձուն. հատին վարմատս ագահութեան, եւ չորացան մահաբեր արուդք ուսոց նոցա: Խոնարհութեամբ կոպեցին քամբարոտանութիւն եւ նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն: Աղօթիւք բացին պիակեալ իտնարհութեան, եւ սուրք խնդրումովք իջուցին քիւրեշտակս ի փրկութիւն. դրունս երկնից, եւ սուրք խնդրումովք իջուցին քիւրեշտակս ի փրկութիւն. լուսն աւետիս ի հեռաւտանէ, եւ փառաւորեցին վԱստուած ի բարձունս» (Էջ 404-406):

Բայց եթէ այս պարագայում, արդէն առանց ենթակայութեան, հասկանալի են վարդանանք եւ Ղեռնդեանք, ապա վասակ Միսին եւ վասակեանք, դաւանաբանական առումով՝ եւսակենտրոն (ինչպէս Յակոբոսի տիպը), իրենց անձը բնութիւնից վեր դասող, պատուամով (որը քրիստոնէական փառքագրութեան մէջ մերժելի է), թերեւս անհատական մանրամասնելով աւելի

գծուած, քան Վարդանը եւ միւսները...: Այնուամենայնիւ Եղիշէն սրանով մի նպատակ է հետապնդում. ինչպէս Յակեբոսի յոխորտանքները նկարագրելիս, այնպէս էլ Վասակին կենդանապատկերելիս Եղիշէն արուեստականութեան չի ձգտել, այլ դրանով ուզեցել է պատկերել եւ նշառակել այս տիպը, որը դաւաճանեց ուխտին եւ անցաւ պարսիկների կողմը եւ մերժուելով՝ դաւաճանի անուն վաստակեց: Այս տիպը մերժում է սակայն Եղիշէի երկում եւ պարսիկների եւ հայերի կողմից...: Եղիշէի երկի ենթատեքստում հասկանալի է, որ այս տիպը, լինելով երկրի մապամը, հաշուի չնառնեց այն ներքին ուժերի հետ, որոնց շահերը տոհայեցին գնալ Աւարայր՝ ճակատամարտելու, այնպէս էլ՝ իր անձնականորոն շահերը «խառնեց» պարսիկների շահերին, որը եւս մերժուեց: Ուստի Եղիշէն անխնայ է այս հերձուածողի տառապանքները նկարագրելիս եւ ասում է՝ թէ՛ «գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա» (էջ 282), որպէս զի «սամէն մարդ որ լսի եւ իմանայ այս բանը, նպովք կարդայ նրա հետեւից եւ նրա գործերին ցանկացող չլինի» (էջ 283):

Եղիշէի «Վասն Հայոց պատերազմի» Ոսկէմատեանն հետեւաբար մի անկորնչելի ուժ ունի, նախնականութեան եւ իմացականութեան մի դրոշմ, որն աւանդում է՝ «այս հաւատից մեզ ոչ ոք չի կարող խախտել. ո՛չ հրեշտակները եւ ո՛չ մարդիկ, ո՛չ սուրբ եւ ո՛չ հուրը, ո՛չ ջուրը եւ ո՛չ էլ որեւէ այլ դառն հարուած» (էջ 81): Բրիտոնէական-լուսաւորական դարի այս Մատեանը ասեւ հեթանոսներին լոյս տանող, այնտեղից մեր ապառաժ ուժը՝ լինելու, ինքնութեան, յարատեւ ցեղի-եւոք է բերում: Ու այսօր էլ, ինչպէս հնում, հայր իր առաքելութիւնն ունի մեր դարի խառնարանում: Եւ սա ներշնչում է մեզ, մոտանդում ազգային պարթոնքի...:

Սրբապան Պատրիարք Հայր, Թորգոմ արք. Մանուկեան,

Հայ եկեղեցին (այդ շարքում եւ Ս. Յակոբեանց միաբանութիւնը) կշիռ ունի պատմականօրէն ինչպէս իր աւանդականութեամբ, ազգային-քրիստոնէական սրբարանով, այլ նաեւ Հայաստանի այսօրուայ անկախութեան վերահռչակումով, որ արժեքաբանութեան նոր համակարգում իր նշանակութեամբ պէտք է ապաւինի եւ զօրակցի ինչ ազգային է եւ առաքելական: Հետեւաբար, Հայ եկեղեցին, ազգային, կույտուր-քաղաքական իր առաքելութեամբ մեր դարում, վերարժեքաւորելով արդի պատմութիւնը, մեր երկրի եւ ժողովրդի պատմութեանը համընթաց, առ հասարակ պարթոնքի քաղաքականութիւն պէտք է վարի, եթէ նա (եկեղեցին) Ներսէս Մեծի ժառանգորդն է...: Եթէ մենք այսօր ունենք վիթխարի Սփիւռք (իսկ Սփիւռքը «քանք» է - ակունքից կտրուող ջուր (Չ. Մելքոնեան))²⁶ եւ սփիւռքացող... Հայաստան, ապա անելի ներուժ է պէտք՝ լեզուի, մշակոյթի եւ պատմութեան միասնութիւնը պահպանելու, մեր պետութեան եւ ժողովրդի վրայ ներազդելու եւ ուղղորդելու՝ մեր լինելութեան ու վաղուայ համար...: Լինելով հայ եկեղեցու այսօրուայ Նահապետներից մէկը, սրբապան պատրիարք հայր, Ձեր խօսքի միջոցով յորդորէք համայն հայութեանը՝ սատարելով նրան Ձեր ոգու ուժով եւ սրբութեամբ՝ ճանաչելու ինքն իրեն եւ զօրանալու սրանով...:

... եւ որպէս չի միտքս չհասնի «երկարաքանութեան» (Նարեկացի), ապա ընդհատելով, ասեմ, որ այս խօսքերը պէտք է ասուէին (գրուէին) մի օր եւ ասուեցին այսօ՛ր, այստե՛ղ, ա՛յս պահին...:

1. Ըստ տպագրութիւնների Եղիշէի երկի վերնագիրն է՝ «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Դարթի երիցո Մամիկոնի հայցեալ»: Մ. Արեղեանը ճիշտ է համարում ոչ թէ «Մամիկոնի», այլ «Մամիկոնեանի» ձեւը: (Մ. Արեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, հ. 1, Երեւան, 1944, էջ 297): Վերնագրի մէջ հետագայում է աւելացրած «Վարդանայ» բառը, անշուշտ, Վարդան սպարապետի դերի գնահատման համար: Աւելի ուշ 451 թուի պատերազմը կոչուել է նաեւ «Վարդանանց պատերազմ»: Եղիշէն, սակայն, երկի Ընծայականի մէջ վերնագիրը նշում է առանց «Վարդան» անուն, միայն՝ «վասն հայոց պատերազմին» այսոպաշտութեամբ (տե՛ս Եղիշէի երկի բնագիրը, Երեւան, 1989, էջ 7):

Ամենահին բնագիրը ընդունում է մեկնում «Անձեւացեաց օրինակը»: Այս ձեռագրում չկայ Եղիշէի անունը, որից Բաբգէն ծ. վ. Կիլիկեանը եպրակացրել է, թէ Եղիշէ-ն «կեղծանուն է» (Բաբգէն ծ. վ. Կիլիկեան, Եղիշէ. Բնական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1909, էջ 68): Բայց սա չի նշանակում, որ իրապէս այդպէս է. նախ մեր ձեռքը հասած բնագիրը կարող է ամենահինը չլինել, երկրորդ՝ Եղիշէի անունը կարող էր դուրս մնալ արտագրողի անփութութեան պատճառով:

2. «Դրանով հենց .- գրում է Արեղեանը,- մեր այս հեղինակը մի հմուտ պատմագիր է, որ լայն քաղաքական-մտնետական հաւացք ունի իր պատմած ժամանակի դէպքերի վրայ»: (Մ. Արեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, հ. 1, Երեւան, 1944, էջ 300):

3. տե՛ս Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երեւան, 1989, էջ 412-413 (Ժանօթագրութիւն Երուանդ Տէր-Սինասեանի 5):

4. Անդ, էջ 413-414, Ժանօթագրութիւն 8:

5. Անդ, էջ 414, Ժանօթագրութիւն 11:

6. տե՛ս Դ. Դանիւրճեան, Երկեր, հ. 12, Երեւան, էջ 329:

7. Եղիշէ, Վարդանի եւ հայոց պատերազմի մասին, Երեւան, 1989, էջ 33 (այնուհետեւ մէջբերումներ անելիս էջահամարը տեքստում կը նշենք այս հրատարակութիւնից):

8. տե՛ս Ն. Ադոնց, Հայաստանը Յուսիսիսկանսի ժամանակաշրջանում (ռուս.), Ս.-Պետերբուրգ, 1908թ.,

Գր. Տէր-Պողոսեան, «Եղիշէի պատմութեան աղբիւրը», «Հանդէս ամսօրեայ», 1895, նոյն հեղինակի՝ «Նկատողութիւններ Եղիշէի պատմութեան վերաբերեալ», «Հանդ. Ամս. » 1896,

Գր. Խալաթեանց, «Նամակ առ խմբագրութիւն Եղիշէի աղբիւրների առթիւ», «Հանդ. Ամս.», 1895թ.,

Բ. ծ. վ. Կիլիկեան. Եղիշէ. Բնական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1909,

Elishe, History of Warden and the Armenian War. Transl. and commentary by Robert W. Thomson, Cambridge, Mass.; Harvard University Press, 1982,

Peter S. Cowe, «Elishe's Armenian War» եւ այլն:

9. Մ. Աբեղեան, Հայոց հին գրականության պատմություն, Երևան, հուն. 1, 1944, էջ 302:
10. Անդ, 302:
11. Եղիշէն այդ մասին գրում է մի քանի անգամ՝ «Յորում պատահեցաք եւ մեք իսկ ականատես լինելով» (Ընծայական թուղթ առ Դաիթ Մամիկոնեան): «Որպէս յայսմ ժամանակի տեսաք աջօր մերովք, քի վնոյն նահապետութիւն նահապետակեցաւ եւ Աշխարհս Հայոց» (էջ 10), «Ես ինքնին անձամբ անդէն ի տեղոջն պատահեցի եւ տեսի...» (Բեղանակ, էջ 30):
12. Բաբգէն Ժ. Վ. Կիւլեսերեան, Եղիշէ. Բնական ուսումնասիրություն, Վիեննա, 1909, էջ 79-80:
13. Թորգոմ արք. Գուշակեան (հետետողություն Եղիշէ Դուրեան Սրբապանի), Երուսաղէմ, 2001թ. էջ 51:
14. Անդ, էջ 49:
15. Ն. Ադոնց, Հայաստանը Յուսոինիանոսի ժամանակաշրջանում (ռուս.), Ս.-Պետերբուրգ, 1908թ., էջ 126, ծան.:
16. «Հանդէս Ամսօրեայ», 1902, էջ 91 (Հ. Գեղեղ, «Սկսքնաւորություն Բիւպանդական բանկաթեմերու դրութեան»):
17. Elishe, History of Warden and the Armenian War. Transl. and commentary by Robert W. Thomson (Cambridge, Mass.; Harvard University Press, 1982) p. 25.
18. Peter S. Cowe, «Elises Armenian War», op. cit., p. 355 (թարգմանությունը վերցուած է Արմէն Այուպեանի «Հայաստանի պատմագրութեան լուսաբանումը ամերիկեան պատմագրութեան մէջ» աշխատությունից, Երևան, 1998, էջ 156):
19. Անդ, էջ 345:
20. Թորգոմ արք. Գուշակեան (հետետողություն Եղիշէ Դուրեան Սրբապանի), Երուսաղէմ, 2001թ. էջ 50:
21. Անդ, էջ 56:
22. Անդ, էջ 57:
23. Անդ, էջ 51:
24. Անդ, էջ 53:
25. Յ. Օշականն այս բնորոշումը գրել է Դ. Դեմիրճեանի «Վարդանանք» եւ Սո. Զորեանի «Պապ թագավոր» վէպերի մասին իր «Վկայություն մը» հատորի մէջ (Պէլյուրթ, 1981, էջ 30): Օշականը տուեալ դէպքում ելնում է իր մտահայեցությունից, որ յատուկ ուսումնասիրութեան նիւթ է:
26. Զարեհ Մելքոնեան, Ամերիկահայ գրականութեան տեղը, ներկան ու ապագան (Գրական ելոյթներ, 26-28 հոկտեմբեր, 1984), Նիւ Եորք, 1985, էջ 94: